Թ.

Եղբայր սիրելի որդի, որ ի յայս հողըս կու կենաս,
Յաշխարհս ես ի բան եկել, զաչքըդ բա՛ց թէ յո՞ւր կու գընաս.
Խըրատ մի քեզ տայ կամիմ, զուգեմ օղ քան զոսկի խալաս.
Սիրես ’ւ ի յականջդ ածես՝ եթէ դու զկեանքըդ կամենաս:

Ժ.

Դաւիթ արքայի որդին Սողոմոն զայս մեզ կու ասէ.
Ըզխրատն իմաստնոյն դու տո՛ւր, առաւել նա ըզքեզ սիրէ:
Թէ անգէտ ’ւ անմիտ մարդոյն խըրատ տաս նա ըզքեզ ատէ,
Ու թուր ու դանակ առնու, թէ կարէ նայ զքեզ սպանանէ:

ԺԱ.

Գանգատ եմ ու խոց, եղբա՛րք, սիրտս ի վեր արիւն կու բերէ.
Ի մանկութենէ ի վեր զիս ուսման հոգսըն կու մաշէ.
Եկեր եմ գերի անկել, ճար չըկայ որ մէկ մի գընէ.
Դատիմ քան զամէն մըշակ, նայ մարդ կայ որ դեռ կու խոցէ:

ԺԲ.

Չորս բան ա՛ռ խըրատ յինէն, որ զամէն աշխարհս քեզ արժէ.
Զայլոց մեղք դու մի՛ քընիներ, զքոյդ յերակ մըտօքդ անդիճէ՛:
ՁԱստուած մօտ ի քեզ դու տես ու զմահու օրըն դու յիշէ՛.
Ըզխրատս ի սըրտիդ տընկէ՛, զքեզ յամէն չարէ սա պահէ:

ԺԳ.

Զքո մեղքն իսկի մի՛ մոռանր, որ խոնարհ զանձնըդ կու պահէ.
Զայլոց մեղք դու մի՛ քընիներ, որ Աստուած ըզքեզ չըդատէ.
ՁԱստուած թէ ի մօտ հայիս, մեղքն իսկի ըզքեզ չըխաբէ.
Ով որ զօր մահուն յիշէ, զայս աշխարհս բընաւ չըսիրէ:

ԺԴ.

Դաւիթ մարգարէն ’ւ արքայն սիրելեացն ըզսէրն է գովել,
Ընցգուն վայելուչ ’ւ աղուոր են եղբարքս ի մէկտեղ եկել,
Քան զԱհարոնի գըլուխն որ ծաղկանց իւղովն էր օծել,
Կամ ցօղն Աիերմոն լերին ’ւ Թաբօր քաղցրիկ նա ցօղել:

ԺԵ.

Ձեր գալդ է բարի, եղբա՛րք, որ ի յայս տեղիքս էք եկել,